ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՅԱՆ

ԽԱՌԸ ԵՎ ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ (ՍԵՌԱԿԱՆ-ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐ)

Լեզվի զարգացման ընթացքում փոխվում են բառերի քերականական իմաստների արտահայտման միջոցները՝ առաջ բերելով լեզվական ձևերի տարբերակներ: Այդ տարբերակները ստեղծում են լեզվական զուգաձևություններ կամ լեզվական զուգահեռ ձևեր. դրանք կարող են գոյակցել լեզվի համաժամանակյա կտրվածքում, մինչև դրանցից մեկը դուրս գա գործածությունից:

Ընդհանրապես լեզվական զուգաձևությունները (բազմաձևությունները) ձգտում են միօրինակացման, մինչդեռ լեզվական տվյալ փուլում առկա զուգաձևությունները հակադրվում են այդ միտումին:

Լեզվական զուգաձևությունները բառային կամ քերականական այն ձևերն են, որոնք իմաստով (ֆունկցիայով) նույնն են, ձևով՝ տարբեր[1]:

Լեզվական զուգաձևությունները հարացույցի մեջ ստեղծում են հավելավոր ձևեր, որոնք այլ կերպ կոչվում են հոմանիշ բառաձևեր: Գրաբարում հավելավոր հարացուցային ձևեր ունեն որոշ գոյականներ, դերանուններ և բայեր:

Հմմտ. Ե ներքին թեքման գոյականների հոգնակի հոլովաձևերը սեռական, տրական, բացառական և գործիական հոլովներում. անգեղք-անգեղոց (անգեղաց) - անգեղց (անգեղաց) - յանգեղց (յանգեղաց) - անգեղբք (անգեղաւք): Ցուցական որոշ դերանուններ նույն հոլովների եզակի և հոգնակի ձևերում ունեն զուգաձևություն. այս - այսր (այսորիկ) - այսմ (այսմիկ) - յասմ (յասմանէ) - այսու (այսուիկ), այսք (այսոքիկ) - այսց (այսոցիկ) - այսց (այսոցիկ) - զայս (զայսոսիկ) - յասց (յասցանէ) - այսոքիւք (այսոքիմբք) և այլն: Լինել (իմ) անկանոն բայը ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակում ունի հավելավոր հարացուցային ձևեր (կազմված առաջին և երկրորդ հիմքերով). եղէց - եղիցիս - եղիցի, եղիցուք - եղիջիք - եղիցին և (լիցիմ) - լիցիս - լիցի, լիցուք - լիջիք - լիցին[2] և այլն:

---

[1] Տես Հ.Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարագյուլյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 100:

[2] Լ.Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 214:

Գրաբարում լեզվական տարբերակները (զուգածևությունները) առավելապես տարածված են գոյականի հոլովման և բայի խոնարհման համակարգերում:

Գոյականի համակարգում առկա զուգածևությունները առավելապես գործում են թեք հոլովներում, ընդ որում դրանք հանդիպում են ինչպես պարզ հոլովներում, այնպես էլ խառը և անկանոն հոլովման գոյականների թեքական ձևերում:

Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զուգածևությունները հանդես ես գալիս հետևյալ խառը հոլովներում Ի-Ա, Ո-Ա, իսկ անկանոն կամ զարտուղի հոլովման գոյականներից զուգածևություն են ցուցաբերում **գիւղ, հայր, մայր, եղբայր, աւր, այր** բառերը և նրանցից բաղադրված բարդությունները:

Գրաբարի սեռական // տրական հոլովներում առկա զուգածևություններում կան թե՛ առաջնային, թե՛ երկրորդական, թե՛ կանոնական և թե՛ ոչ կանոնական, ինչպես նաև գրչագրական վրիպակների հետևանքով մեզ հասած զուգահեռ ձևեր:

Հին հայերենում տարբերակայնություն դրսևորում են **Ի-Ա** (թե՛ ներքին, թե՛ արտաքին), **Ո-Ա** խառն հոլովման պատկանող բառերը:

Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

Ի-Ա խառն արտաքին հոլովման համար ձևաբանական օրինաչափությունը սահմանում է հետևյալը. ձևական ընդհանրություն չունեցող և ունեցող (-ակ, -ական, -արան, -եակ, -իկ, -իչ, -որդ, -ոց, -ու, -ուկ, -պան, -ստան, -որ //աւոր հնչյունակապակցություններով կամ ածանցներով վերջացող) որոշ հասարակ անուններ, ինչպես նաև որոշ անեզական հասարակ գոյականներ ենթարկվում են Ի-Ա խառն արտաքին հոլովման:

Այս հոլովման շրջանակներում դիտարկենք այն բառերը, որոնք հոլովվում են նաև այլ հոլովիչներով:

Ի - Ա//Ի. գէտ (գետի-գետաց//գետից), շնորհ (շնորհի-շնորհաց // շնորհից), սաղմոս (սաղմոսի-սաղմոսաց//սաղմոսից), ազգատոհմ (ազգատոհմի - ազգատոհմաց // ազգատոհմից), աստղագէտ (աստղագետի - աստղագիտաց // աստղագիտից), ասպնջական (գոյ. առիթ) (ասպնջականի - ասպնջականաց//ասպնջականից), գուպար (գուպարի - գուպարաց//գուպարից), դաստակերտ (դաստակերտի - դաստակերտաց//դաստակերտից, դիակապուտ (դիակապուտի - դիակապուտաց // դիակապուտից), դիւթ (դիւթի - դիւթաց//դիւթից), թագ (թագի-թագաց//թագից), կապարճ (կապարճի – կապարճաց//կապարճից):

Ի - Ա//Ո. աման (ամանի - ամանաց//ամանոց), աղքատ (աղքատի - աղքատաց//աղքատոց), անկողին (անկողնի - անկողնաց//անկողնոց), անձրեւ (անձրեւի - անձրեւաց//անձրեւոց, ասպար (ասպարի - ասպարաց//ասպարոց), ապտակ (ապտակի - ապտակաց//ապտակոց), ապաստան (ապաստանի - ապաստանաց//ապաստանոց), բաղարջ (բաղարջի - բաղարջաց//բաղարջոց), բուն (բնի - բնաց // բնոց), կաշառ (կաշառի - կաշառաց//կաշառոց), նշանագիր (նշանագրի – նշանագրաց//նշանագրոց), սնգոյր (սնգոյրի – սնգուրաց//սնգուրոց), տաղանդ, (տաղանդի – տաղանդաց//տաղանդոց), վաստակ (վաստակի – վաստակաց//վաստակոց), բաժակ (բաժակի - բաժակաց//բաժակոց), բազմանիւթ, (բազմանիւթի - բազմանիւթաց//բազմանիւթոց), ծովաթաղանթ (ծովաթաղանթի – ծովաթաղանթաց//ծովաթաղանթոց), նիզակաբուն (նիզակաբունի – նիզակաբունաց//նիզակաբունոց), անծուկ (1. նեղություն, 2. փափագ) (անծուկի - անծուկաց//անծուկոց), զմրուխտ (զմրուխտի-զմրուխտաց // զմրուխտոց, սնգոյր (սնգոյրի – սնգուրաց//սնգուրոց):

Ի - Ա//Ոի. աղաւնեվաճառ (աղաւնեվաճառի - աղաւնեվաճառաց // աղաւնեվաճառուց, թաւ (հաստ ու թանձր ծայն) (թաւի – թաւաց//թաւուց), սպառազէն (սպառազինի / սպառազինաց//սպառազինուց):

Սալամբ գոյականը թեքվում է ի-ա արտաքին հոլովմամբ: Զուգահեռաբար հանդիպում են նաև սալամ ձևը (հոգն. ուղղ. սալամունք, սեռ.//տր. սալամանց), որը դրսևորում է ներքին թեքման յուրահատկություններ:

Ուշագրավ է սակուր գոյականի հոլովումը Ի-Ա արտաքին հոլովմամբ՝ ի հակադրություն նույնիմաստ սակր բառի, որը հոլովվում է ե ներքին թեքմամբ: Մօրու գոյականը, որը սովորաբար հոգնակի ձևով է հանդես գալիս, այն է՝ մօրուք (ուղղականում ունի նաև մորու ձևը), ըստ որում երկուսն էլ պատկանում են Ի-Ա խառն արտաքին հոլովման. ուղղական հոլովում դրսևորած տարբերակայնությունը հանգեցնում է սեռական // տրական հոլովներում զուգաձևերի առկայությանը (Ի-Ա հոլովման շրջանակներում):

Յոլով (շատերը) գոյականը թեքվում է Ի // Ի-Ա հոլովման փոխանցումներով: Հոգնակի ուղղականում ունի յոլովք // յոլովիք բառաձևերը, հոգնակի սեռ.//տր. հոլովներում յոլովից // հոլովեաց երկձևությունները:

Հմմտ. նաև կինճ // կինջ - կնճի // կնջի, կնճաց // կնջաց (Ի-Ա), համբարու // համբարի - համբարուի, համբարուաց // համբարոյ // համբարեաց (Ի-Ա // Ո-Ա), երասան // երասանակ - երասանի // երասանակի, երասանաց // երասանակաց (Ի-Ա) տարբերակային ձևերը:

Դառն (բառը բանջար) գոյականը հանդես է գալիս ի-ա // ի հոլովման տարբերակներով. դառին // դառնի, -անց // աց:

Ափն, բուռն, դիւցազն, ստեղն, թէկն, ակն, ափն գոյականները հոլովվում են **ի-ա // ա** ներքին հոլովումներով. **ափին // ափան, բռին // բռան, դիւցազն // դիւցազան, ստեղին // ստեղան, թիկին // թիկան, ակին // ական, ափին // ափան**:

Այս կարգի զուգահեռ ձևերի առումով մասնագիտական գրականության մեջ շեշտվում է. «Նշելով այս կապը միաժամանակ չի կարելի անտեսել քերականական նմանությունը, որի հիման վրա առանձին բառեր կարող էին շեղվել իրենց հոլովման սկզբնական տիպից: Ըստ պատմա-համեմատական քերականության այս հոլովումները նույն ծագումն ունեն: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է հայկական հողի վրա նրանց ձևավորումից հետո առաջացած առնչություններին»[3]:

Ո-Ա խառն արտաքին հոլովման պատկանում են հիմնականում **ի** ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը (բացառությամբ -ցի վերջածանց ունեցող բառերի): Այս հոլովմամբ են թեքվում նաև **-ենի, -ոտի, -ուհի** վերջածանցներով կազմված բառերը, **-ուն** վերջածանց ունեցող հատուկ անունները, ինչպես նաև մի շարք անեզական հատուկ և հասարակ գոյականներ:

Ո-Ա հոլովման պատկանող որոշ բառեր եզակի տրականում երկրորդաբար ստանում են **-ջ** հոլովակերտը. **տամալի - տամալւոյ // տամազւոջ, այգի - այգւոյ // այգւոջ, ծղխնի - ծղխնւոյ //ծղխնւոջ, ջորի - ջորւոյ // ջորւոջ, դալարի - դալարւոյ // դալարւոջ, կղզի - կղզւոյ // կղզւոջ, տարի - տարւոյ // տարւոջ, տեղի - տեղւոյ // տեղւոջ**:

Սեռական-տրական հոլովներում **Ո-Ա // Ի** զուգահեռ ձևեր են առաջանում ուղղականում **արծուի // արծիւ** ձևերի առկայությամբ. **արծուոյ (արծուեաց) // արծուի**:

Ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի շրջանակներում հանդիպում են ձևաբանորեն - հնչյունափոխական երկձևույթներ. **խարամանի – խարամանւոյ // խարամանոյ (խարամանեաց)**:

-եայ-ով վերջացող բառերը, որոնք պատկանում են **Ի** հոլովման, հոգնակի թվում թեքվում են նաև **Ո-Ա** խառն հոլովման օրինակով սեռական // տրական հոլովներում դրսևորելով նաև հնչյունափոխական զուգաձևություններ. **Արևելեայք - Արևելեայց // Արևելեաց, դուզնաքեայք - դուզնաքեայց // դուզնաքեաց, Հայաստանեայք - Հայաստանեայց // Հայաստանեաց**:

Ո - Ա//Ո հոլովումների շրջանակներում զուգաձևություններ են դրսևորում հետևյալ գոյականները. **Արշակունիք - Արշակունեաց // Արշակունւոց,**

---

[3] Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., «Լույս» հրատ., 1976, էջ 64:

Ասորի - Ասորեաց // Ասորւոց (Ո հոլովմամբ հատկապես, երբ ոչ թե երկիրը, այլ ազգությունն է մատնանշվում)[4]: Ո - Ա//Ո հոլովման փոխանցումներով են հանդես գալիս նաև գինի (գինւոյ - գինեաց // գինւոց), մեռելոտի (մեռելոտւոյ - մեռելոտեաց // մեռելոտւոց), ջորի (ջորւոյ - ջորեաց // ջորւոց), հոգի (վերջինս իր համար ոչ կանոնական Ո-Ա հոլովմամբ պատահում է սակավ դեպքերում) (հոգւոյ - հոգեաց // հոգւոց) բառերը:

Անկանոն կամ զարտուղի հոլովման մեջ ընդգրկված են հինհայերենյան այն բառերը, որոնք թեք հոլովածներում հատուկ հոլովիչներ չեն ստանում և ենթարկվում են հնչյունական անսովոր փոփոխությունների: Անկանոն հոլովման ենթակա են այր (տղամարդ), տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, տիկին, աւր // օր, գիւղ, տիւ գոյականները:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս բառերը գրաբարի քերականություններում ներառվել են այս կամ այն կանոնավոր հոլովման մեջ, թեպետև վերջիններիս առումով ընդգծվել է հոլովման զարտուղի լինելու հանգամանքը[5]:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ «անկանոն հոլովման ենթարկվող բոլոր բառերի այս կամ այն ձևի մեջ անշուշտ նկատվում է հայերենի օրինաչափ հոլովումների այս կամ այն պատկերը, բայց պատմական շրջանում բառը վերցնում ենք իր փոփոխության ամբողջականության մեջ, իսկ երբ այդպես ենք դիտում, իսկապես կա անկանոն կամ զարտուղի հոլովում, որին պատկանող բառերից յուրաքանչյուրն անշուշտ մի կանոնավոր հոլովման մնացորդ է կամ տարբեր կանոնավոր հոլովումների բաղարկության հետևանք»[6]:

Դիտարկենք քոյր գոյականի սեռական // տրական քեռ, քերց առաջնային ձևերի կողքին երկրորդային հետևյալ կիրառությունները. քոյր // քօր // քուեր, քեռ // քուերց:

Գիւղ գոյականը հոգնակի սեռական // տրական հոլովներում պատահում է նաև Ա հոլովիչով. եզակի թիվ. գեղջ, հոգնակի թիվ. գիւղից // գիւղաց: Հմմտ. նաև եզակի թիվ. գեւղջ // գեաւղջ // գեաղջ երկրորդական ձևերը: Հոգնակի թվում գիւղից // գիւղաց ձևերի համեմատ երկրորդական է գեաւղից

---

[4] Ընդհանրապես զուգաձևություններում կարևոր է դրանցից յուրաքանչյուրի իմաստային առանձնահատկությունը:

[5] Հմմտ. Ա հոլովում. այր, տէր, հայր, մայր, եղբայր, կին, Ե հոլովում. քոյր, Ի հոլովում. գիւղ, Ու հոլովում. աւր // օր (տե՛ս Ա. Բագրատունի, Նշվ. աշխ., էջ 34 – 37), Ա հոլովում. այր, տէր, մայր, հայր, եղբայր, Ե հոլովում. քոյր, Ո-Ա հոլովում. կին, տիկին, Ե-Ի հոլովում. գիւղ, Ու հոլովում. աւր, Ա հոլովում. տիւ (տե՛ս Ա. Աբրահամյան, էջ 53):

[6] Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, հ. 1, Եր., «Վիամիր» հրատ., 2008, էջ 66 – 67:

հոլովածները: Անկանոն հոլովման պատկանող բառերում զուգաձևություններ հանդիպում են հատկապես հոգնակի սեռական // տրական հոլովներում. տէր - (տեառն), տեարց // տերանց, հայր - (հաւր // հօր), հարց // հարանց, կին - (կնոջ), կանանց // կանաց, տիկին - (տիկնոջ), տիկնայց // տիկնաց:

Հայր, մայր և եղբայր բառերը եզակի սեռական // տրական հոլովներում հանդես են գալիս հնչյունափոխական հետևյալ տարբերակներով հաւր // հօր, մաւր // մօր, եղբայր // եղբօր:

Աւր գոյականը տրական հոլովում աւուր հոլովածևի կողքին ունի նաև երկրորդական օրին ձևը:

Այր բառի եզակի սեռական // տրական հոլովներում առն բառածևին զուգահեռ հանդիպում է նաև արան ձևը:

Հոլովման մեջ անկանոնություն հանդես բերող այդօրինակ գոյականների նման են թեքվում նաև նրանցով բաղադրված բարդությունները. սկեսրայր - սկեսրառն // սկեսրայր // սկեսրեայ // սկեսրէ (հնագույն ձևեր են), տանուտէր - տանուտեառն, տանուտեարց // տանուտերանց // տանուտերաց:

Այսպիսով, ի մի բերելով գրաբարյան սեռական // տրական հոլովներում հանդիպող զուգաձևությունների վերաբերյալ մեր դիտարկումները կարելի է եզրակացնել.

1. Հին հայերենում հոլովական զուգաձևություն դրսևորում են Ի-Ա, Ո-Ա խառն, ինչպես նաև անկանոն հոլովում ունեցող գոյականները:
2. Սեռական // տրական հոլովներում հանդիպող զուգաձևություններում պատահում են գրաբարի ինչպես դասական շրջանից, այնպես էլ հնագույն ժամանակներից մեզ հասած ձևեր, ըստ որում թե հոլովման փոխանցումներով և թե միևնույն հոլովման շրջանակներում հնչյունափոխական տարատեսակություններով:
3. Հոլովական երկձևություններ և բազմաձևություններ ի հայտ են բերում թե հասարակ, թե հատուկ գոյականները:
4. Սեռական // տրական հոլովներում առկա են թե կանոնական և թե ոչ կանոնական զուգահեռ ձևեր:
5. Ընդհանրապես հոլովական զուգաձևություններում կարևորվում է այս կամ այն ձևի արտահայտած մասնավոր (բառական) իմաստը: